01.10.2017թ.

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Ավագ սերնդի հարգարժան ներկայացուցիչներ

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Տարեցների միջազգային օրվա առթիվ, որը Հայաստանում նշվում է 1993թ-ից:

Անկախ տոնացուցային նշումից՝ հայ ընտանիքներում առանձնահատուկ վերաբերմունք և հարգանք կա տան մեծի նկատմամբ, ովքեր միաժամանակ խորհրդանշում են ընտանիքների ամրությունն ու սերունդների համերաշխությունը:

Գիտեմ՝ միշտ չէ, որ մեր կողքին ապրող տարեցներն արժանանում են պատշաճ ուշադրության, քիչ չեն նաև նրանց հիմնախնդիրները, սակայն արվում է հնարավորն ու կարելին, որպեսզի բազմաբնույթ խնդիրները գոնե մասնակիորեն ստանան լուծում:

Տեղական իշխանություններն էլ իրենց ամենօրյա գործունեության ընթացքում փորձում են համայնքում ապրող մեծահասակների խնդրաշատ առօրյան թեթևացնել, ապահովել նրանց համար արժանապատիվ կյանք:

Հարգելի ծնողներ,

Սիրելի տատիկներ ու պապիկներ

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքի ավագանու անունից մաղթում եմ ձեզ առողջություն, երկարակեցություն, բարեկեցություն, ապահով ծերություն:

Եղեք շրջապատված ձեր զավակներով, թոռներով ու հարազատներով, վայելեք ձեր տարիները ապահով ու խաղաղ երկնքի տակ և ձեր ներկայությամբ սեր ու ջերմություն բերեք ձեր ընտանիքներին: